# Ա Զ Գ Ա Յ Ի Ն Հ Ա Շ Ի Վ Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Կ Ա Ր Գ
# S Y S T E M O F N A T I O N A L A C C O U N T S
# С И С Т Е М А Н А Ц И О Н А Л Ь Н Ы Х С Ч Е Т О В

Սկսած 2015թ.-ից **համախառն ներքին արդյունքի** (ՀՆԱ) ցուցանիշը ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկվում է համաձայն Ազգային հաշիվների համակարգ 2008 (ԱԱՀ 2008) միջազգային ստանդարտի: Ըստ ԱՀՀ 2008-ի վերանայվել են Հայաստանի ազգային հաշիվների ցուցանիշները՝ սկսած 2012թ.-ից:

**Ազգային հաշիվների համակարգը** տնտեսությունում մակրոտնտեսական գործընթացների նկարագրման և վերլուծության համար կիրառվող փոխկապակցված ցուցանիշների համակարգ է:

ԱՀՀ-ի առանցքային ցուցանիշը համարվում է ՀՆԱ-ն, որը բնութագրում է երկրի տնտեսությունում արտադրված ապրանքների ու ծառայությունների արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար:

ՀՆԱ-ն հաշվարկվում է երեք եղանակով՝ արտադրական, եկամուտների օգտագործման (ծախսային) և եկամուտների ձևավորման :

Արտադրական եղանակով ՀՆԱ-ն ստացվում է որպես տնտեսությունում ապրանքների ու ծառայությունների ողջ թողարկման և միջանկյալ սպառման տարբերության և արտադրանքի զուտ (առանց սուբսիդիաների) հարկերի հանրագումար:

Եկամուտների օգտագործման եղանակով հաշվարկված ՀՆԱ-ն ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման ծախսերի, համախառն կուտակման և զուտ արտահանման հանրագումարն է:

ԱՀՀ-ի շրջանակում կատարվող հաշվարկներում ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների ՀՆԱ-ի հաշվարկման եղանակը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում կիրառվող ՀՆԱ-ի հաշվարկման երեք եղանակներից մեկն է: Սակայն դա անկախ հաշվարկ չի համարվում, քանի որ ընդունված մեթոդաբանության համաձայն եկամտային ոչ բոլոր ցուցանիշներն են ստացվում ուղղակի հաշիվներից, դրանց մի մասը հաշվարկվում է հաշվեկշռման եղանակով:

Since 2015 the **Gross Domestic Product** (GDP) indicator is compiled by NSS RA according to the System of national accounts 2008 (SNA 2008) international standard. According to SNA 2008 indicators of Armenia's national accounts have been rivised since 2012.

The **System of National Accounts** is a system of interrelated indicators which are used for description and analysis of macroecnomic processes in the economy.

The key indicator of the SNA is the GDP, which characterizes the value of goods and services produced in the economy of a country and is intended for final consumption, capital formation and net exports.

GDP is calculated by three methods: production, expenditure and income generation.

GDP by production method is the difference between the output of goods and services for the whole economy and intermediate consumption plus net taxes (less subsidies) on products.

GDP by expenditure method is defined as the sum of expenditures on final consumption of goods and services, gross capital formation, and net exports.

The method of constructing GDP through sources of incomes is one of the three methods used by the National Statistical Service of the Republic of Armenia to calculate GDP within the SNA. But it is not independent because not all indicators of incomes can be measured directly and some of them are calculated with the balance method.

**С 2**015 года со стороны НСС РА **валовой внутренний продукт** (ВВП ) рассчитывается согласно системе национальных счетов 2008 (СНС 2008) международного стандарта. В соответствии с СНС -2008 пересмотрены данные национальных счетов Армении начиная с 2012 года.

**Система национальных счетов** - система взаимоувязанных показателей, применяемая для описания и анализа макроэкономических процессов в экономике.

Ключевым показателем СНС является ВВП , характеризующий стоимость товаров и услуг, произведенных в экономике страны и предназначенных для конечного потребления, накопления и чистого экспорта.

ВВП рассчитывается тремя методами: производственным методом, методом использования (расходным) доходов и методом формирования доходов.

ВВП, рассчитанный производственным методом, получается как разность между выпуском товаров и услуг в целом по экономоке и промежуточным потреблением, плюс чистые (за вычетом субсидий) налоги на продукты.

ВВП, рассчитанный методом использования, представляет собой сумму расходов на конечное потребление товаров и услуг, валового накопления и чистого экспорта.

Метод образования ВВП по источникам доходов является одним из трех методов исчисления ВВП, применяемых Национальной статистической службой РА в рамках расчетов по СНС. Однако, он не является самостоятельным, поскольку в соответствии с принятой методологией не все показатели доходов получаются путем прямого счета, часть из них исчисляется балансовым методом.

Ըստ եկամուտների աղբյուրների ՀՆԱ-ի ձևավորումն արտացոլում է անմիջապես արտադրական գործընթացին մասնակցող միավորների, ինչպես նաև պետական հիմնարկների և տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացած սկզբնական եկամուտները: Այս հաշվարկներում համախառն շահույթը (համախառն խառը եկամուտը) հանդիսանում է հաշվեկշռող հոդված և որոշվում է որպես արտադրական եղանակով հաշվարկված շուկայական գներով ՀՆԱ-ի և աշխատողների աշխատանքի վարձատրության ու արտադրության և ներմուծման զուտ հարկերի տարբերություն:

Նշված եղանակը կիրառվում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ոչ թե ՀՆԱ-ի անվանական ծավալի կամ դինամիկայի որոշման, այլ միայն դրա արժեքային կառուցվածքի վերլուծության համար:

**Ապրանքների և ծառայությունների հաշիվն** ինքնատիպ ամփոփ աղյուսակ է: Ինչպես և բոլոր մյուս հաշիվները, այն նույնպես կազմված է երկու մասից` «ռեսուրսային», որտեղ ցույց են տրվում ապրանքների ու ծառայությունների թողարկումն ու ներմուծումը, արտադրանքի հարկերը և սուբսիդիաները և «օգտագործման», ինչը ներառում է սպառման (միջանկյալ և վերջնական) համար օգտագործվող ապրանքների և ծառայությունների ծավալները, հիմնական և շրջանառու կապիտալի կուտակումը, ապրանքների և ծառայությունների արտահանումը:

**Արտադրության հաշիվն** արտացոլում է անմիջականորեն արտադրական գործընթացին վերաբերվող գործառնությունները: Այս հաշվում որոշվում է ՀՆԱ-ի հաշվարկման համար հիմք հանդիսացող ավելացված արժեքը:

**Թողարկումն** իրենից ներկայացնում է հաշվետու տարում տնտեսությունում արտադրված ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքը:

**Միջանկյալ սպառումը** կազմված է այն ապրանքների ու ծառայությունների արժեքից, որոնք հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ սպառվում կամ վերափոխվում են արտադրության ընթացքում: Միջանկյալ սպառման մեջ չի մտնում հիմնական կապիտալի սպառումը:

Միջանկյալ սպառման կազմում առանձին դիրքով ներառվում են ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները:

The calculation of GDP through sources of incomes reflects primary incomes receivable by entities directly involved in the process of production, as well as by general government and non-profit institutions serving households. The gross operating surplus (gross mixed income) is a balancing item, which is defined as the difference between the GDP, at market prices, calculaled by the production method and compensation of employees and net taxes on production and imports.

This method is used by the National Statistical Service of the Republic of Armenia only to analyse the value structure of GDP, but not to determine its nominal volume or changes.

**Goods and services account** is a special summary table. Like all other accounts, it consists of two parts: on the resource side the output and import of goods and services, taxes on products, subsidies on products are recorded; on the use side consumer expenditures (intermediate and final) on goods and services, gross fixed capital formation, changes in inventories, and export of goods and services are recorded.

**Production account** records transactions directely linked to the production process. In this account the value added is defined, which serves as a basis for calculating the Gross Domestic Product.

**Output** is the value of goods and services produced in the economy during the reported year.

**Intermediate consumption** is equal to the value of goods and services, transformed or consumed in the current process of production. The intermediate consumption does not include consumption of fixed capital.

Intermediate consumption also covers financial intermediation services indirectly measured.

Формирование ВВП по источникам доходов отражает первичные доходы, получаемые единицами, непосредственно участвующими в производстве, а также государственными учреждениями и некоммерческими организациями, обслуживающими домашние хозяйства. В этом расчете валовая прибыль (валовой смешанный доход) является балансирующей статьей и определяется как разница между ВВП, рассчитанным производственным методом в рыночных ценах, оплатой труда работников и чистыми налогами на производство и на импорт.

Данный метод используется Национальной статистической службой РА для анализа стоимостной структуры ВВП, а не для определения его номинального объема или динамики.

**Счет товаров и услуг** является своеобразной сводной таблицей. Как и все счета, он состоит из двух частей: в части “ресурсы” показываются выпуск и импорт товаров и услуг, налоги на продукты, субсидии на продукты: в части “использование”- объемы использования товаров и услуг на потребление (промежуточное и конечное), накопление основного и оборотного капитала, экспорт.

**Счет производства** отражает операции, относящиеся непосредственно к процессу производства. В этом счете определяется добавленная стоимость, составляющая основу исчисления ВВП.

**Выпуск** представляет собой суммарную стоимость товаров и услуг, произведенных в экономике в отчетном периоде.

**Промежуточное потребление** состоит из стоимости товаров и услуг, которые трансформируются или полностью потребляются в процессе производства в отчетном периоде. Потребление основного капитала не входит в состав промежуточного потребления.

В состав промежуточного потребления отдельной позицией включается потребление косвенно измеряемых услуг финансового посредничества.

**Համախառն ավելացված արժեքը** հաշվարկվում է ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ որպես ապրանքների և ծառայությունների թողարկման ու միջանկյալ սպառման տարբերություն: «Համախառն» արտահայտությունը ցույց է տալիս, որ ցուցանիշն իր մեջ ներառում է հիմնական կապիտալի սպառման արժեքն արտադրության գործընթացում:

**Արտադրության և ներմուծման զուտ հարկերը** ներառում են արտադրանքի և ներմուծման հարկերը, արտադրության այլ հարկերը: «Զուտ» արտահայտությունը նշանակում է, որ հարկերը ցույց են տրվում առանց համապատասխան սուբսիդիաների:

**Արտադրանքի հարկերը** ներառում են այն հարկերը, որոնց չափերն ուղղակիորեն կախված են թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների արժեքից: Դրանց թվին են դասվում ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը և այլն: Ներմուծման հարկը դա ներմուծվող ապրանքներից և ծառայություններից գանձվող հարկն է:

**Արտադրության այլ հարկերը** բաղկացած են այն բոլոր հարկերից, որոնցով հարկվում են արտադրող միավորներն արտադրության գործընթացի կամ արտադրության գործոնների օգտագործման հետ կապված (բացի արտադրանքի հարկերից): Այդպիսի հարկերի չափերն ուղղակիորեն կախված չեն արտադրության ծավալներից և շահութաբերությունից: Դրանք չեն ներառում նաև կառուցվածքային միավորների ստացած շահույթի կամ այլ եկամուտների վրա ցանկացած հարկերը: Արտադրության այլ հարկերից են բնական պաշարների օգտագործման համար վճարները (բնապահպանության վճար), հողի, արտադրության մեջ օգտագործվող շենքերի ու շինությունների (անշարժ գույք) պարբերական հարկերը, արտոնագրային վճարները, պետական տուրքերը և այլն:

**Սուբսիդիաները** պետական բյուջեից որոշակի ապրանքների և ծառայությունների արտադրության նպատակով կազմակերպություններին տրամադրվող անհատույց ընթացիկ վճարներն են:

**Եկամուտների ձևավորման հաշիվը** եկամուտների սկզբնական բաշխման հաշվի բաղկացուցիչ մասն է: Այն արտացոլում է անմիջականորեն ապրանքների ու ծառայությունների արտադրության գործընթացին մասնակցող կառուցվածքային ռեզիդենտ-միավորների կողմից վճարված սկզբնական եկամուտները:

**Gross value added** is calculated at the level of economic activities as the value of output of goods and services less the value of intermediate consumption. The term "Gross" means, that the value added includes the value of fixed capital consumed in the process of production.

**Net taxes on production and imports** include taxes on products and imports and other taxes on production.
The term "Net" means that taxes are shown excluding related subsidies.

**Taxes on products** include taxes which directly depend on the value of goods produced and services rendered. Taxes on products include: value added tax (VAT), excise tax, etc. Taxes on imports are those levied on imported goods and services.

**Other taxes on production** consist of all taxes, except taxes on products, payable by enterprises in connection with their participation in the production process. The rates of these taxes do not directly depend on the volume and profitability of production. They do not include taxes on profit or on other incomes of enterprises. Other taxes on production include: taxes on use of natural resources (environment tax), payments for land (land tax), licenses, state duties and levies payable by enterprises and organizations, real estate tax, e.t. c.

**Subsidies** are current noncompensible payments from the State budget to enterprises provided to those enterprises which are producing particular goods and services.

**Generation of income account** is a constituent element of primary distribution of income accounts. It reflects primary incomes payable by resident institutional units directly engaged in the process of production of goods and services.

**Валовая добавленная стоимость** исчисляется на уровне видов экономической деятельности как разность между выпуском товаров и услуг и промежуточным потреблением. Термин "валовая" указывает на то, что показатель включает потребленную в процессе производства стоимость основного капитала.

**Чистые налоги на производство и импорт** включают налоги на продукты и на импорт и другие налоги на производство. Термин "чистые" означает, что налоги показаны за вычетом соответствующих субсидий.

**Налоги на продукты** включают налоги, размер которых прямо зависит от стоимости произведенной продукции и оказанных услуг. К налогам на продукты относятся: налог на добавленную стоимость, акцизы и др. Налоги на импорт- это налоги на импортируемые товары и услуги.

**Другие налоги на производство** состоят из всех налогов, которыми облагаются производящие единицы в связи с их производством или использованием факторов производства, кроме налогов на продукты. Размер таких налогов прямо не зависит от объема и рентабельности производства. Они не включают также любые налоги на прибыль или иные доходы, получаемые институциональной единицей. К другим налогам на производство относятся: налоги за пользование природными ресурсами (экологический налог), плата за землю (земельный налог), плата за патенты, государственная пошлина и сборы, взимаемые с предприятий и организаций, налог на недвижимость.

**Субсидии** - текущие некомпенсируемые выплаты из государственного бюджета организациям при условии производства ими определенного вида товаров и услуг.

**Счет образования доходов** является составной частью счетов первичного распределения доходов. Он отражает выплату первичных доходов институциональными единицами-резидентами, непосредственно участвующими в производстве товаров и услуг.

Կառուցվածքային միավորը համարվում է երկրի **ռեզիդենտ**, եթե այդ տարածքում է գտնվում նրա տնտեսական շահերի կենտրոնը, այսինքն՝ եթե այն զբաղվում կամ նախատեսում է զբաղվել տնտեսական գործունեության որևէ տեսակով կամ գործառնություններով երկար ժամանակահատվածում (մեկ տարի և ավել):

**Աշխատողների աշխատանքի վարձատրությունը** որոշվում է հաշվետու ժամանակաշրջանում վարձու աշխատողներին կատարած աշխատանքների համար գործատուի կողմից դրամական կամ բնեղեն ձևով վճարված բոլոր վարձատրությունների գումարով: Աշխատողների աշխատանքի վարձատրությունը հաշվառվում է հաշվեգրված գումարներով և իր մեջ ընդգրկում է նաև սոցիալական ապահովագրության վճարները, եկամտահարկը և այլ վճարները, որոնք ենթակա են վճարման աշխատողների կողմից:

**Համախառն (զուտ) շահույթն** իրենից ներկայացնում է ավելացված արժեքի այն մասը, որը մնում է արտադրողներին վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության և արտադրության հարկերի վճարման հետ կապված ծախսերը կատարելուց հետո: «Համախառն» կամ «զուտ» շահույթ արտահայտությունը տվյալ դեպքում ցույց է տալիս, թե արտադրության գործընթացում հիմնական կապիտալի սպառումը հաշվի առնված է նշված ցուցանիշում, թե ոչ:

Տնային տնտեսություններին պատկանող ձեռնարկությունների արտադրական գործունեության արդյունքում ձևավորված շահույթը կոչվում է **համախառն խառը եկամուտ**, քանի որ այն արտացոլում է ինչպես ձեռնարկատիրոջ կողմից կատարած աշխատանքի վարձատրությունը, այնպես էլ ձեռնարկատիրական շահույթը:

**Սկզբնական եկամուտների բաշխման հաշիվը** համարվում է եկամուտների սկզբնական բաշխման հաշվի երկրորդ կառուցվածքային մասը: Այն բնութագրում է ռեզիդենտների (կառուցվածքային միավորների կամ հատվածների) միջև արտադրական գործունեությունից և սեփականությունից ստացած սկզբնական եկամուտների բաշխումը:

**Սեփականությունից ստացված եկամուտներն** այն եկամուտներն են, որոնք ստացվում կամ վճարվում են կառուցվածքային միավորի կողմից օգտագործման նպատակով տրամադրված ֆինանսական, հողի և այլ ոչ ֆինանսական ակտիվների (ընդերք և այլ բնական ակտիվներ, պատենտ, արտոնագիր և այլն) օգտագործման արդյունքում:

An institutional unit is considered to be **resident** within a country when it has a centre of economic interest in that territory, i.e. is engaged or is going to get engaged in some economic activities or transactions during a long period (one year and more).

**Compensation of employees** is defined as remuneration, in cash or in kind, payable to employees for work done during the accounting period. Compensation of employees is recorded on the basis of gross amounts and includes contributions to social insurance schemes, income tax deductions, and other payments, payable by employees, even if these are actually deducted by administration and paid directly to social insurance funds, tax services or any other institutions on behalf of the employees.

**Gross (or net) operating surplus of the economy** is the part value added which remains with producers after deducting outlays related to the remuneration of employees and taxes on production. The terms "gross" and "net" in this case show if this indicator includes or excludes consumption of fixed capital in the process of production.

The income created by "unincorporated enterprises" owned by households is called "Gross mixed income", because it reflects both remuneration of work done by the owner of enterprise and enterpreneural income.

**Allocation of primary income account** is the second constituent of the primary distribution of income accounts. It shows how incomes obtained from the production activity or property are distributed among resident institutional units or sectors.

**Property incomes** include incomes receivable or payable by institutional units in connection with putting the financial assets, land, and other non-financial assets (minerals and other natural resources, patents, licenses, etc.) at the disposal of other institutional units.

Институциональная единица считается **резидентом** экономики страны, если она имеет на ее территории центр экономического интереса, то есть, если она занимается или собирается заниматься каким-либо видом экономической деятельности или операциями в течение длительного периода времени (один год и более).

**Оплата труда работников** определяется суммой всех вознаграждений в денежной или натуральной форме, выплачиваемых работадателями работникам за работу, выполненную ими в течение отчетного периода. Оплата труда работников учитывается на основе начисленных сумм и включает в себя суммы отчислений на социальное страхование, налогов на доходы и другие выплаты, которые подлежат уплате работниками.

**Валовая (чистая) прибыль** представляет собой ту часть добавленной стоимости, которая остается у производителей после вычета расходов, связанных с оплатой труда работников и уплатой налогов на производство. Термин "валовая" или "чистая" в данном случае указывает на то, включает или не включает этот показатель потребление основного капитала в процессе производства.

Прибыль, образовавщаяся в результате производственной деятельности предприятий, находящихся в собственности домашних хозяйств, носит название **валового смешанного дохода**, поскольку она отражает как оплату работы, выполненной собственником предприятия, так и прибыль от предпринимательства.

**Счет распределения первичных доходов** является второй составной частью счетов первичного распределения доходов. Он характеризует распределение первичных доходов, полученных от производственной деятельности и от собственности, между резидентами (институциональными единицами или секторами).

**Доходы от собственности** включают доходы, получаемые или выплачиваемые институциональными единицами в связи с предоставлением в пользование финансовых активов, земли и других нефинансовых активов (недра и другие природные активы, патенты, лицензии и т.п.).

**Սկզբնական եկամուտների սալդոն** բնութագրում է այն եկամուտները, որոնք ձևավորվում են կառուցվածքային ռեզիդենտ-միավորների մոտ` արտադրության մասնակցելուց և սեփականությունից: Այն որոշվում է որպես ռեզիդենտ-միավորների ստացած և վճարած բոլոր սկզբնական եկամուտների տարբերություն: Ամբողջ տնտեսության մակարդակով սկզբնական եկամուտների սալդոն` հաշվարկված համախառն հիմքով, այսինքն, մինչև հիմնական կապիտալի սպառման դուրս բերումը, հավասար է համախառն ազգային եկամտին:

**Եկամուտների երկրորդային բաշխման հաշիվն** արտացոլում է ընթացիկ անհատույց փոխանցումների ստացման և փոխանցման արդյունքում հատվածների սկզբնական եկամուտների սալդոյի վերափոխումը տնօրինվող եկամտի:

**Տրանսֆերտը** գործառնություն է, երբ կառուցվածքային մեկ միավորը տրամադրում է ապրանքներ, ծառայություններ, ակտիվներ (ֆինանսական կամ ոչ ֆինանսական) մեկ այլ միավորի` առանց դրանց դիմաց ապրանքի, ծառայության կամ ակտիվի ձևով փոխհատուցում ստանալու: Տարբերում են ընթացիկ և կապիտալ անհատույց փոխանցումներ: Դրանք կարող են իրականացվել դրամական և բնեղեն ձևով:

**Ընթացիկ տրանսֆերտները** ընդգրկում են հետևյալ հիմնական տեսակները` եկամտի և ունեցվածքի ընթացիկ հարկեր և այլն, հատկացումներ սոցիալական ապահովագրությանը, սոցիալական նպաստներ, կամավոր մուծումներ և ոչ կապիտալ բնույթի նվերներ, տուգանքներ և այլն:

**Տնօրինվող եկամուտն** այն եկամուտն է, որը վերջնական սպառման կամ խնայողության նպատակով տնօրինում է կառուցվածքային միավորը: Այն հավասար է համախառն ազգային եկամտից հանած փոխանցված ընթացիկ տրանսֆերտներ և գումարած ստացած ընթացիկ տրանսֆերտներ: Բոլոր կառուցվածքային ռեզիդենտ-միավորների տնօրինվող եկամուտների գումարը հավասար է **համախառն ազգային տնօրինվող եկամտին**:

Օգտագործման փուլում ՀՆԱ-ն հաշվարկվում է որպես ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման, համախառն կուտակման և զուտ արտահանման (առանց ներմուծման) հանրագումար:

Balance of primary incomes characterizes incomes receivable by institutional units as a result of their participation in production or from property. It is defined as the difference between all primary incomes receivable and payable by resident units. At the level of the total economy the balance of primary incomes calculated gross, i.e. before deduction of consumption of fixed capital, is equal to **Gross National Income.**

**Secondary distribution of income account** reflects the transformation of the balance of primary incomes by sectors into their disposable incomes, as a result of receipts and payments of current transfers.

**Transfer** is defined as a transaction in which one institutional unit provides goods, services or assets (financial or non-financial) to another unit without receiving from the later any goods, services or assets in return as counterpart. There are current and capital transfers. They may be either in cash or in kind.

**Current transfers** include: current taxes on income, and property, etc.; social security contributions and benefits; voluntary payments and gifts without capital character, fines, etc.

**Disposable income** is defined as income at institutional units` disposal for final consumption and saving. It is equal to the Gross National Income less current trasfers payable plus current transfers receivable. The sum of disposable incomes of all resident institutional units is equal to **Gross National Disposable Income**.

From use side, Gross Domestic Product is calculated as the sum of final consumption of goods and services, gross formation and net exports (excluding imports).

**Сальдо первичных доходов** характеризует доходы образующиеся у институциональных единиц-резидентов в результате их участия в производстве и от собственности. Оно определяется как разница между всеми первичными доходами, полученными и выплаченными единицами-резидентами. На уровне экономики в целом сальдо первичных доходов, определенных на валовой основе, то есть до вычета потребления основного капитала, равно **валовому национальному доходу**.

**Счет вторичного распределения доходов** отражает преобразование сальдо первичных доходов секторов в их располагаемый доход в результате поступлений и передачи текущих трансфертов.

**Трансферт** представляет собой операцию, когда одна институциональная единица предоставляет товары, услуги или активы (финансовый или не финансовый) другой единице, не получая в замен от нее возмещения в виде товара, услуги или актива. Различают текущие и капитальные трансферты. Они могут производиться в денежной и натуральной формах.

**Текущие трансферты** вкючают следующие основные виды: текущие налоги на доходы, имущество и т.п., отчисления на социальное страхование, социальные пособия, добровольные взносы и подарки, не имеющие капитального характера, штрафы и т.д.

**Располагаемый доход** представляет собой доход, которым институциональная единица располагает для конечного потребления и сбережения. Он равен: валовой национальный доход минус переданные текущие трансферты плюс полученные текущие трансферты. Сумма располагаемых доходов всех институциональных единиц-резидентов равна **валовому национальному располагаемому доходу**.

На стадии использования ВВП расчитывается как сумма конечного потребления товаров и услуг, валового накопления и чистого (за вычетом импорта) экспорта.

**Տնօրինվող եկամտի օգտագործման հաշիվը** ցույց է տալիս, թե տնային տնտեսությունները, պետական հիմնարկները և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները ինչպես են իրենց տնօրինվող եկամուտը բաշխում վերջնական սպառման ծախսերի և խնայողության միջև:

**Վերջնական սպառման ծախսերը** ձևավորվում են տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերից, տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների վերջնական սպառման ծախսերից, ինչպես նաև կոլեկտիվ ծառայությունների, անհատական ծառայությունների ու ապրանքների համար կատարված պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերից: Այսպիսի խմբավորումը ցույց է տալիս վերջնական սպառման ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն ըստ հատվածների:

**Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը** ներառում են տնային տնտեսությունների այն ծախսերը, որոնք ուղղված են բոլոր առևտրական կազմակերպություններում, քաղաքային շուկաներում և ոչ կազմակերպված (փողոցային) առևտրի վայրերում, կենցաղային և բնակարանային-կոմունալ սպասարկման, ուղևորատար տրանսպորտի, կապի, հյուրանոցների, մշակույթի, առողջապահության և կրթության հիմնարկների՝ սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, ինչպես նաև տնային տնտեսությունների կողմից սեփական սպառման համար արտադրված և որպես աշխատանքի վարձատրություն ստացած ապրանքների և ծառայությունների բնեղեն տեսքով սպառմանը (անձնական օժանդակ տնտեսությունների գյուղատնտեսական արտադրանքը, սեփական կացարանում ապրելու պայմանականորեն չափվող ծառայությունները):

**Պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերն՝** ուղղված անհատական պահանջմունքների բավարարմանը, կազմված են պետական հիմնարկների անհատական սպառման համար նախատեսված սպառողական ապրանքների և ծառայությունների համար կատարած ծախսերից: Այսպիսի ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին:

**Պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերն՝ ուղղված կոլեկտիվ պահանջմունքների բավարարմանը,** տարբերվում են նախորդից նրանով, որ դրանցում հաշվի են առնվում պետական բյուջեի հաշվին կազմակերպությունների

**Use of disposable income account** shows how households, general government and non-profit institutions serving households (NPISHs) distribute their disposable income between final consumption expenditures and saving.

**Final consumption expenditures** consist of final consumption expenditures of households, general government final consumption expenditures on individual goods and services and collective services, and also final consumption expenditures of non-profit institutions serving households. Such grouping shows which sector pays for final consumption.

**Final consumption expenditures of households** include outlays for purchasing consumer goods and services from all trading enterprises and market-places, and through non-organized trade (street vendors), from public utility service, passenger transport, communications establishments, hotels, commercial institutions of culture, health care, education, and also other consumption of goods and services in kind, produced for own use (agricultural produce of personal subsidiary plots, imputed services of owner-occupied dwellings), and received as labour remuneration.

**General government final consumption expenditures on individual goods and services** consist of outlays of government institutions on consumer goods and services intended for personal consumption.
Such outlays are funded from the State budget and extra-budgetary funds.

**General goverment final consumption expenditures on collective services**. This category is different from the previous one since it includes services rendered by organizations which are compensated from

**Счет использования располагаемого дохода** показывает, как домашние хозяйства, государственные учреждения и некоммерческие организации, обслуживающие домашние хозяйства, распределяют свой располагаемый доход между расходами на конечное потребление и сбережение.

**Расходы на конечное потребление** складываются из расходов на конечное потребление домашних хозяйств, расходов на конечное потребление государственных учреждений на индивидуальные товары и услуги, на коллективные услуги, а также расходов на конечное потребление некоммерческих организаций, обслуживающих домашние хозяйства. Такая группировка показывает источники финансирования расходов на конечное потребление по секторам.

**Расходы на конечное потребление домашних хозяйств** включают расходы домашних хозяйств на приобретение потребительских товаров и услуг во всех торговых организациях, на городских рынках и через неорганизованную (уличную) торговлю, предприятиях бытового, жилищно-комунального обслуживания, пассажирского транспорта, связи, гостиницах, платных учреждениях культуры, здравоохранения и образования, а также потребление товаров и услуг в натуральной форме, произведенных для себя и полученных в качестве оплаты труда (сельскохозяйственная продукция личных подсобных хозяйств, условно исчисленные услуги по проживанию в собственном жилище) .

**Расходы на конечное потребление государственных учреждений на индивидуальные товары и услуги** состоят из расходов государственных учреждений на потребительские товары и услуги, предназначенные для индивидуального потребления. Такие расходы финансируются за счет государственного бюджета и внебюджетных средств.

**Расходы на конечное потребление государственных учреждений на коллективные услуги** - этот показатель отличается от предыдущего тем, что в нем учитываются

կողմից մատուցվող ծառայությունները, որոնք բավարարում են ոչ թե առանձին տնային տնտեսությունների, այլ ամբողջ հասարակության պահանջմունքները:

**Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների վերջնական սպառման ծախսերը** տնային տնտեսություններին հասարակական կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սպառողական ապրանքների ու ծառայությունների համար կատարված ծախսերն են: Դրանց մեջ ներառվում են նաև իրենց աշխատողներին կրթության, առողջապահության, հանգստի և զվարճանքների ոլորտում կազմակերպությունների կողմից մատուցված անվճար ծառայությունները:

**Հիմնական կապիտալի համախառն կուտակումն** իրենից ներկայացնում է ռեզիդենտ-միավորների կողմից ապագայում նոր եկամտի ստեղծման համար միջոցների ներդրումը հիմնական կապիտալի օբյեկտներում` արտադրության մեջ դրանք օգտագործելու ճանապարհով:

**Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունն** ընդգրկում է արտադրական պաշարների, անավարտ արտադրության, պատրաստի արտադրանքի և վերավաճառքի համար նախատեսված ապրանքների պաշարների փոփոխությունը: Տվյալ ժամանակահատվածում պաշարների արժեքի փոփոխությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի վերջին և սկզբին առկա պաշարների արժեքների տարբերություն` գնահատված դիտարկվող ժամանակահատվածի միջին շուկայական գներով` գների ազդեցությունը չեզոքացնելու նպատակով:

**Կապիտալի հետ գործառնությունների հաշիվն** արտացոլում է հիմնական կապիտալի համախառն կուտակման և նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխության ֆինանսավորումը, ներառյալ կապիտալ անհատույց փոխատվությունների ձևով հարստության վերաբաշխումը տնտեսության հատվածների և «արտերկրի» միջև:

Կապիտալի հետ գործառնությունների ֆինանսավորման հիմնական աղբյուրը հանդիսանում է խնայողությունը, որը տեղափոխվում է եկամուտների օգտագործման հաշվից: Այդ գործառնությունների ֆինանսավորման մյուս աղբյուրը համարվում են ստացած կապիտալ տրանսֆերտները`առանց փոխանցվածների:

the State budget; such services meet needs of community as a whole, but not of individual households.

**Final consumption expenditures of non-profit institutions serving households** are outlays of non-commercial organizations on consumer goods and services provided free of charge to households are also included here. The services provided free of charge by organizations to their employees on education, health care and etc.

**Gross fixed capital formation** is defined as resident units` investments in fixed assets with the purpose of using these to create new incomes in the future.

**Changes in inventories** comprise changes in productive stocks of semi-finished and finished products, and products for resale. The value of changes in inventories during a given accounting period is equal to the difference between the value of inventories at the end and at the beginning of the year, measured at average market prices of the period in order to eliminate the influence of prices.

**The capital account** shows the funding of gross fixed capital formation and change in inventories, including the redistribution of wealth among the sector of the economy and the rest of the world through capital transfers.

The main source for financing capital transactions is saving, which is brought forward from the use of income account.

The other sources of funding these transactions are capital transfers receivable less capital transfers payable.

услуги, оказываемые за счет государственного бюджета организациями, которые удовлетворяют потребности не отдельных домашних хозяйств, а общество в целом.

**Расходы на конечное потребление некоммерческих организаций, обслуживающих домашнние хозяйства -** расходы общественных организаций на потребительские товары и услуги, предоставляемые домашним хозяйствам бесплатно. Сюда же включаются бесплатные услуги, оказываемые организациями своим работникам в области образования, здравоохранения, отдыха и развлечения.

**Валовое накопление основного капитала** представляет собой вложение резидентными-единицами средств в объекты основного капитала для создания нового дохода в будущем путем использования их в производстве.

**Изменение запасов материальных оборотных средств** включает изменение производственных запасов, незавершенного производства, готовой продукции и товаров для перепродажи. Изменение стоимости запасов в течение данного периода рассчитывается как разность между стоимостью запасов на конец и на начало периода, оцененных в средних рыночных ценах рассматриваемого периода для устранения влияния цен.

**Счет операций с капиталом** отражает финансирование валового накопления основного капитала и изменения запасов материальных оборотных средств, включая перераспределение богатства между секторами экономики и “остальным миром” в виде капитальных трансфертов.

Основным источником, финансирования операций с капиталом является сбережение, которое переносится из счетов использования доходов. Другим источником финансирования этих операций являются полученные капитальные трансферты за вычетом переданных.

Հաշվի հաշվեկշռող հոդվածը զուտ վարկավորումը (+) կամ զուտ փոխառությունն (-) է:

**Կապիտալ տրանսֆերտներն** իրենցից ներկայացնում են ակտիվների (բացի կանխիկ դրամի և նյութական շրջանառու միջոցների) կամ դրանց ձեռք բերման համար միջոցների սեփականության իրավունքի տրանսֆերտները՝ մեկ կառուցվածքային միավորից մյուսին: Կապիտալ տրանսֆերտները լինում են միանվագ և նշանակալի՝ ըստ գործառնության մեծության, կապված մասնակիցների կողմից ակտիվների օգտագործման կամ դուրս գրման հետ:

**Զուտ վարկավորումը (+) կամ զուտ փոխառությունը** (-) ֆինանսավորման աղբյուրների գերազանցումն է կամ պակասուրդը (դեֆիցիտ) ոչ ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերման ծախսերի համեմատությամբ: Ողջ տնտեսության մակարդակով զուտ վարկավորումը կամ զուտ փոխառությունը ցույց է տալիս ռեսուրսների այն քանակը, որը երկիրը տրամադրում է «արտերկրին» կամ «արտերկիրը» տրամադրում է երկրին:

**Զուտ արտահանումը** հաշվարկվում է որպես ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման տարբերություն:

**Գնահատման սկզբունքները**: Համակարգում գնահատումն ընթացիկ գներով իրականացվում է գործառնություններում փաստացի օգտագործված գներով:

ՀՆԱ-ի արտադրությունն ու օգտագործումը գնահատվում են այն ընթացիկ շուկայական գներով, որոնք գերակշռում են արտադրանքի արտադրության կամ օգտագործման ժամանակահատվածում:

Տնտեսական գործունեության տարբեր տեսակներում արտադրության և եկամուտների ձևավորման կառուցվածքի վրա հարկերի և սուբսիդիաների դրույքաչափերի տարբերության ազդեցությունը չեզոքացնելու համար ցուցանիշները գնահատվում են հիմնական գներով: **Հիմնական գինն** արտադրողի միավոր արտադրանքի գինն է, առանց արտադրանքի ցանկացած հարկի, սակայն, ներառյալ արտադրանքի սուբսիդիաները:

Ոչ շուկայական ապրանքներն ու ծառայությունները գնահատվում են կամ շուկայում իրացվող նմանատիպ ապրանքների ու ծառայությունների գներով, եթե դա հնարավոր է որոշել կամ՝ արտադրության ծախսերով, եթե շուկայական գինը բացակայում է (մասնավորապես այդպես են գնահատվում պետական հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ծառայությունները):

The balancing item of the account is net lending (+) or net borrowing (-).

**Capital transfers** are defined as free transfers of ownership of capital assets (other than inventories and cash) from one institutional unit to another, transfers in cash to be used by the recipient for acquisition of capital assets. Capital transfers are usually nonrecurrent and considerable in value transactions connected with acquisitions or disposals of assets by participants in the transaction.They include taxes on capital, investment grants, other capital transfers.

**Net lending (+) or net borrowing (-)** is defined as the excess or deficit of sources of funds over the expenditures on non-financial assets. At the level of the economy, net lending or net borrowing shows the value of resources paid to “the rest of the world” and received from “the rest of the world”.

**Net exports** are defined as the difference between exports and imports of goods and services .

**Principles of valuation**. In the SNA, valuation is made at current prices used at the moment of transactions.

